ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ — «Երկերի ժողովածու», հատոր երրորդ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 12000, 664 էջ, գինը 2 ռ. 25 կոպ.։

Պատկանյանի երկերի գիտական հրատարակության այս հատորում տեղավորված են գրողի վիպակները, տպագրված ու անտիպ պատմվածքները և դրամատիկական երկերը։

Հատորին կցված գիտական ապարատը հարուստ տեղեկություններ է պարունակում երկերի ստեղծագործական պատմության վերաբերյալ։

Ս. Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ — «Մաթեմատիկան և իրականությունը», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը 1000, 280 էջ, գինը 80 կոպ.։

Աշխատության մեջ փորձ է արվում մաթեմատիկայի զարգացման պատմական ու տրամաբանական ընթացքի քննարկման միջոցով լուսաբանել մաթեմատիկայի առարկայի, մեթոդի, մաթեմատիկական մտածելակերպի ու աբստրակցիաների առանձնահատկությունների հետ կապված փիլիսոփայական-իմացաբանական բնույթի որոշ հարցեր։

Վ. ԴԻԼՈՅԱՆ — «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից». Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը 3000, 274 էջ, գինը 97 կոպ.։

Մենագրությունը նվիրված է Լազարյանների հասարակական-քաղաքական և մշակութային գործունեությանը XVIII դարի երկրորդ կեսին։

Հեղինակն ընդգծում է այն դերն ու նշանակությունը, որ ունեցել են ռուսահայ գաղթավայրերը հայ ազատագրական շարժման պատմության, ինչպես նաև հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերի հետագա զարգացման ու ամրապնդման գործում։

Գիրքն ունի ռուսերեն լեզվով ամփոփում և օգտագործված գրականության ցանկ։